NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

04 հուլիսի 2017 թվականի N ԴԵԿԲ-002-07/17

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿ (ՍՈՎՈՐԱԿԱՆ) ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՆ ԱՊԱՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԱԶԱՏ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Գլխավոր տնօրենի 2017 թվականի հունվարի 10 թիվ ԴԵԿԲ-001-01/17 որոշումը, ինչպես նաև «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2017 թվականի հուլիսի 3-ի գրությունը՝ Ընկերության հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերն ապացուցակելու և բաժնետոմսերի ազատ (C) շուկա տեղափոխելու մասին,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝

ա. Ընկերությունը 01.07.2017թ. դրությամբ իր կողմից տեղաբաշխված՝ AMUNIBS10ER5 տարբերակիչ ծածկագրով, UNIB հապավումով Օպերատորի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում ընդգրկված, բաժնետոմսերի համար չի ապահովել Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ»-ի 50-րդ կետի 5)-րդ ենթակետով սահմանված պահանջը,

բ. նշված բաժնետոմսերի հանրությանը պատկանող բաժնետոմսերի չափաբաժինը չի համապատասխանում նաև Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ»-ի 52-րդ կետի 3)-րդ ենթակետով սահմանված պահանջին,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 25-րդ կետի, 107 կետի 2-րդ և 12-րդ ենթակետերի, 108-րդ կետի, ինչպես նաև Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59 կետի «զ» ենթակետի դրույթներով՝ Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 144,547,732 (մեկ հարյուր քառասունչորս միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր երեսուներկու) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից շնորհվել է AMUNIBS10ER5 ծածկագիրը, իսկ Օպերատորի կողմից՝ UNIB հապավումը, ապացուցակել և հանել Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակից, ինչպես նաև դադարեցնել նշված բաժնետոմսերի առևտուրը Բորսայում:
2. Նշված բաժնետոմսերին առևտի թույլտվություն տալ Օպերատորի Ազատ շուկայում՝ դրանք ընդգրկելով բաժնետոմսերի ազատ (C) շուկայում և պահպանելով Օպերատորի կողմից շնորհված՝ UNIB հապավումը, ինչպես նաև այդ բաժնետոմսերով հասցեական և ռեպո գործարքների կնքման թույլտվությունը:

3. Հանձնարարել Բորսայական ծառայությունների դեպարտամենտին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի տեղեկատվան համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հուլիսի 6-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐՈՅԱՆ**